

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել [ԱՆՎՃԱՐ](#):

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать **БЕСПЛАТНО**.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for **FREE** scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՄԱԿԱՐԳԱԿԱՆ
ՆԱԿԱՆԱԳՐԱՆԷ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՅԴ ԵՍԿ 07թ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական
երիտասարդական
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման
կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
գիտության վաստակավոր գործիչ

Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած
Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Ընթացք՝ կյանքի շարժիչ ուժ
(Վ. Հակոբյանի «Քարի շնչառությունը» եւ «Թևերի հեռուն»
ժողովածուների մասին)

Մարդկային կյանքի ուղին, որը հաճախ է հանձնատվում ճանապարհի հետ, իր առանցքային նշանակությամբ անրացած է Վարդան Հակոբյանի «Թևերի հեռուն» և «Քարի շնչառություն» բանաստեղծական ժողովածուների հիմքում: Ծանապարհի անհասանելիությունն ու կյանքի անհարատևությունը որպես հիմք ծառայեցնելով՝ բանաստեղծը կառուցում է աշխարհընկալման սեփական փիլիսոփայությունն ու կյանքում առկա յուրաքանչյուր երևույթ դիտարկում այդ նույն փիլիսոփայության լույսի ներքո:

Սիրում եմ մենակ զնալ ճանապարհը: Եվ սիրում եմ չհասնելը,
քանի որ հասնելու մեջ
խաբկանք կա անշուշտ,
չէ՞ որ աշխարհի ոչ մի ճանապարհ վերջ չունի:

Ծանապարհի անհասանելիության գաղափարը Վ. Հակոբյանի փիլիսոփայության միայն արտաքին կեղևն է, լայնակի կտրվածքի դեպքում բացահայտվում են հաջորդ ենթաշերտերը, որոնք շատ բազմազան են կազմված կյանքի հակասականության ու հարաբերականության փոխներթափանցվածությամբ և ունեն շատ նրբին սահմանային անցումներ:

Ծանապարհը ենթադրում է նախ և առաջ շարժում, ընթացք /«Ծանապարհը ծնունդ է տալիս մեզ»/, որովհետև ի սկզբանե կյանքի ու աշխարհի հիմքում ընկած է ընթացքի գաղափարը, իսկ որտեղ ընթացք, այնտեղ փնտրուուք, որոնում ու նաև մաքառում, որի նպատակը մի դեպքում արտաքին աշխարհն ընկալելն ու բացահայտելն է:

Սիրում եմ մաքառումի սերը տիեզերական –

լույսը դուրս գալու ելք է փնտրում ամեն ինչի մեջ, բայց ես
նայելով քարին զգում եմ, որ միշտ չէ դա հաջողվում նրան:

Մյուս դեպքում սեփական ներաշխարհի բացահայտումը, առավել կատարյալ եսի փնտրուուքը, որը նույնպես վերջնասահման չի ճանաչում:

Բոլորը հանդիպում են բոլորին. սակայն

ոչ մեկը չի հասնում ինքն իրեն:

Յուրաքանչյուր վայրկյան մենք կորցնում ենք ինքներս մեզ հաջորդ վայրկյանի մեջ մեկ այլ որակական հատկանիշներով հայտնվելու պայմանով: Աշխարհում առկա բոլոր երևույթները իրենց առարկայական ու զգայական դրսևորմամբ, մեզ հասանելի են դառնում ճանապարհի միջոցով, ճանապարհ, որ մենք անցնում ենք հոգեկան բռիչքի օգնությամբ: Եվ այսքանից հետո պարզ է դառնում, որ արևի տակ «ամենագեղեցիկը», «ամենաթանկը», «ամենանկրկնելիմ» նաև «ամենաանհասը» ճանապարհն է, և սա է կյանքի ու «սիրո հավերժականության հեքիաթ» պատվող կարուսելի շրջագիծը:

Վարդան Հակոբյանի պոեզիայում ամեն ինչ «ճամփորդի» հայացքով է ուսումնասիրված, նույնիսկ կյանքի էության հակասականությունն ու հարաբերականությունը: Հակասականության հիմքում ընկած է բացասումը, որը կյանքը երկու հակասական նժարների միջոցով հավասարակշռության մեջ պահելու ամենադաժան, նաև ամենափմաստուն միջոցն է: Գնալ չհասնել, ուզենալ չստանալ, ունենալ կորցնել, ահա կյանքի հիմքում ընկած ցանկություն-իրակա-նության անհամատեղելիության բանաձևը:

Տխուր է մտածել...

Որ ճշմարտությունը կատարյալ սուտ է,
քանի դեռ նրան հավատում եմ
անվերապահորեն:

Այն, ինչ միայն իմն է, իմը չէ:

Ինչպես արդեն նշել ենք, Վարդան Հակոբյանի «Թևերի հեռուն» և «Քարի շնչառություն» բանաստեղծական ժողովածուներում որոնումների շրջանակը պտտվում է կյանքի փիլիսոփայության շուրջ, մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկված յուրաքանչյուր շերտ, և թվում է գաղափարական նմանատիպ ուղղվածությունը պիտի ենթադրի բանաստեղծության մի տեսակի առկայություն, որտեղ աներևույթ պիտի լինեն բանաստեղծի ապրած ժամանակն ու տարածական սահմանները, սակայն բազմաթիվ բանաստեղծություններում ներկա արցախյան բնապատկերն ու գերակա մտահոգությունները /«Ռսպնյակներ»/ միանգամայն այլ բան են ցույց տալիս: Իր հողվածում Բոգդան Չանյանը գրում է «Բավական լայն ու մեծ են նրա մտասևեռումների հորիզոնները: Պարզապես նա ուր էլ նայում է, ինչին էլ նայում է նայում է արցախյան հողից: Արցախը նրա ստեղծագործությունների դիտա-

կենտն է, պատուհանը, արցախյան հողը նրա ստեղծագործական թռիչքների թռիչքակայանը...

Եվ իրոք, Վ. Հակոբյանի պոեզիայում մեծ տարածությամբ գերակա է արցախյան բնությունը՝ իր բազմազանությամբ, որն էլ անչափ բնական ու յուրօրինակ կերպով տարրալուծվում է փիլիսոփայական շերտերի մեջ:

Թևերը երկնքի ցանկություններն են կախված մեր վտիտ ուսերից,

Աշխարհն ինձ համար էրգիր-Ղարաբաղ է... և ոչ էրգիր-Ղարաբաղ,

Ամեն պահի խորքից էլնում է մի ծաղիկ

Բնապատկերների կիրառության նմանօրինակ տեսակը, որտեղ բնությունը լույս ինքն իրեն նկարագրելու միջոց չէ, այլ նաև ծառայում է որպես ֆոն՝ համապատասխան հոգեվիճակի վերլուծության համար, առավել պարզ ու զգայուն է դարձնում բանաստեղծությունը:

Իրիկնամուտը մանուշակվում է լեռան չանջին, որ

միանգամից լցվի հովիտը մանկության:

Ամեն մեկն իր ներսում

կորած անհայտ է և մենք մեր ստեղծածով ենք ստեղծվում:

Վ. Հակոբյանի ստեղծագործություններում բնության կիրառությանն առավել տարածված տեսակն առնչվում է համենատարբերությունների հետ, որպես մարդկային զգացողությունների թարգմանիչ:

Երկնքից վերև երկինք չկա,

իսկ իմ կախվելու համար

աշխարհի բոլոր առաստաղները ցածր են:

Օգտագործված բնապատկերային համենատարբերությունները հիմնականում բանաստեղծական կառույցի որոշակի մասն են կազմում և նախատեսված են ասված կամ ասելիք փիլիսոփայական մտորումը զգայարանային աստիճանից տեսողական դաշտ տեղավորելու համար:

Ամենագեղեցիկ ծաղիկը միշտ բուսնում է

ամենահեռվում, և չունենք ոչինչ ավելի

ինքնուրույն, քան մեր տեսողությունն է:

Սա բանաստեղծության առաջին քայլն է պատկերի տեսքով, երկրորդ քայլն ասվածի մտորումն է, հետո մեկնությունը, երրորդ քայլում կրկին բնապատկերային համենատարբերումն է, իսկ վերջում հանգուցալուծումը, որը սահուն կերպով սկիզբն ու վերջը իրար կապելով հնչեցնում է հիմնական ասելիքը կտրուկ ու հնչեղ, որի

ներկայությունը ընթերցողը զգացել էր վաղուց, բայց չէր հասցրել գիտակցել:

Հեքիաթների ծաղիկը միշտ բուսնում է այնտեղ, ջուր

հնարավոր չէ հասնել: Բայց մեղուն

անսխալ թռչում, իջնում է իրեն սպասող ծաղկի վրա:

Վերադառնալով կիրառված համենատարբերությունների խնդրին ուզում ենք ընդգծել մի առանձնահատկություն, որն օգնում է որոշ չափով ցույց տալ բանաստեղծական կառույցում գործածված տարրերից ևս մեկի յուրօրինակությունը:

Երազներն ապրում են անհասանելի հորիզոնում,

երբ ուզում են համբուրել այքերդ,

համբուրում են հորիզոնը:

Համենատարբերության վերոնշյալ օրինակում երազի ու հորիզոնի անհասանելիության եզրերը հիմք են տալիս ստեղծելու պատկերը, բայց հիմնական ասելիքը չի ծանրանում համենատարբեր կողմերից և ոչ մեկի վրա, հանգուցալուծումը կատարվում է բոլորովին այլ հարթությունում: Համենատարբերությունների այս յուրօրինակ ձևը, որը միջնորդավորված առարկա, երևույթ է պահանջում, գլխավորապես ծառայում է խաբկանքի միջոցով ընթերցողների բթացած զգայարանները շարժելու և ընթացքին անկանխատեսելիություն հաղորդելու համար:

Բայց հետաքրքրականն այն է, որ միջնորդավորված համենատարբերությունները մնում են ոչ միայն բանաստեղծական առանձին տողերի ու պատկերների տարածքում, այլ շատ հաճախ բանաստեղծության ամբողջականության հիմքն են կազմում: «Թիթեռնակներ պատուհանիս փաղկափեկոցներին» բանաստեղծությունում պատուհան-բանտարկյալ պատկերը ենթադրում է բաժանում, որը սակայն բոլորովին այլ երևույթ նկարագրելու համար է ծառայում:

Իմ ու քո միջև ամենագեղեցիկը,

անկասկած մեր բաժանումը չէր:

Նույն բանաստեղծության վերջին պատկերում համենատարբերությունը տարվում է այս անգամ մեկ այլ հարթությունում

Պատուհաններ չկան, պատուհաններն իրենց միջից

ստեղծում են բանաստեղծները ..

Պատուհան բառն անմիջապես կապ է ստեղծում առաջին տողում հնչած բանտարկյալի հետ, և ծայրաստիճան համենատարբերությունը թելադրում է գլխավոր միտքը: Բանաստեղծները նույն բանտարկյալներն են բանտարկված կյանքի սահմաններում, իսկ սահմաններից այն կողմ հեռուն է, «ուր հանդիպում են բոլոր բաժանվածները»: Տարբեր

հարթություններում հնչող միջնորդավորված մտքերով համեմատությունների ծոցող թափանցիկ լարի միջոցով միմյանց հետ են կապակցվում, ինչն էլ բանաստեղծությունը դարձնում է ամբողջական: Միջնորդավորված մտքերով համեմատություններն ու կառույցի շղթայական հաջորդականությունը լավագույն լուծումն է տարբեր մտահորիզոններում ասված մտքերը միմյանց հետ համակցելու համար: Վարդան Չակոբյանի «Թմերի հեռուն» և «Քարի շնչառություն» բանաստեղծական ժողովածուները հարուստ են նաև իմացական շերտերով: Բանաստեղծությունների մեջ օգտագործված դիցաբանական հերոսների, նշանավոր մարդկանց թիկունքում կանգնած են պատմությունից ու առասպելաբանությունից մեզ հասած դեպքեր, իրադարձություններ և պատումներ, որոնք օգնում են մեկնելու բանաստեղծական տողում առկա մտքերի փիլիսոփայական խտացումները /«Ուտահետքեր ջրերի վրա», «Քառը»/:

Հաճախ բանաստեղծական տողերում ներույթների ու առարկաների ամբողջականությունն ու խորքայնությունը ներկայացնելիս ստեղծագործողի համար խոչընդոտ են հանդիսանում բառերի անլիարժեքությունը /«Բառը ոչնչություն է, ծաղրը ապրում/, թվում է բառերն ի վիճակի չեն ամբողջովին ներկայացնելու ասելիքը, բայց դա խաբուսիկ է, որը գալիս է նրանց հնչյունական կողմի մակերեսայնությունից: Բառերը կազմելիս /հասկացությունները անվանելիս/ հնչյունների ընտրությունը կամայական բնույթ է կրում, չկա ոչ մի նպատակային հետևողականություն, և հավանաբար հենց այդ պատճառն է առիթ տալիս մտածելու, որ բառերն ի վիճակի չեն ներկայացնելու այս կամ այն երևույթի, առարկայի էությունն ամբողջ խորությամբ: Բայց բառերի հնչյունական կազմը հասկացության միայն տեսանելի կողմն է, Վ. Չակոբյանի բանաստեղծությունների հետագա ընթերցումը և քիչ ավելի խորքային վերլուծությունը այլ մտաշերտեր են բացահայտում:

Բառն ընդամենը ինքն իր դուռն է միայն,

ինչքան պիտի ներս գնաս, որ հասնես բուն մտքին:

Արտաբերված բառի հնչյունական կազմը նրա միայն առաջին ազդակն է, որն օգնում է անվանակոչել որևէ առարկա, իսկ հետագա ամբողջն ընկալում է արդեն դուրս լսողական ոլորտից և անհատական բնույթ է կրում:

Եվ բառերը այսբերգներ են ժամանակի մակերեսին,

և ասվածի մի չնչին մասն է մեզ երևում,

մինչդեռ հայրս միշտ խոսում էր

չերևացող մասերով բառերի:

Մեծավ մասամբ բառերն ընկալելիս մենք օգտվում ենք միայն մեր լսողական զգայարաններից մյուս բոլոր զգայարաններին հանգստի ուղարկելով, մինչդեռ բառերի «չերևացող մասերը» ընկալելու համար հենց նրանց օգնության կարիքն ունեինք: Երբ իր բանաստեղծության մեջ Վ. Չակոբյանը արտաբերում է «քար», «առավոտ», «լույս» բառերը, նա ընթերցողից պահանջում է զգայարանների ամբողջական ներկայություն լաված բառերի էության խորքը ներթափանցելու համար:

...և մի հանդուրժեք ոչ մի միջնորդաբառ,

որ չսպանվեն քարը, լույսն ու առավոտը

Ռոբերտ Եսայանը գրում է «Անկրկնելի վիճակներով հաղորդակցվելով ժամանակի հետ բանաստեղծն ավելի է ընդգծում բառի բնավորությունը, որոնք բացահայտվում են ոչ միայն զգացմունքների շիկացման պահին, այլև ողջ ստեղծագործության արարման ընթացքում»: Վ. Չակոբյանի բանաստեղծություններում բառերը պարզապես միջոց չեն հերթական պատկերը, տողն ու ռիթմը ստեղծելու համար, այլ հոգու հանգստության թարգմանիչն են, որոնցում ներդրված լարումը յուրաքանչյուր ընթերցող ընկալում է իր հոգեկան աշխարհի բարձրունքներից:

Քանաքարա Քոչարյան

«Միասնություն» ՄԱԵԿ

Ճանապարհ բազում ելքերով

Գրականությունը գրողի և հասարակության միջև եղած հակասության, այդ հակասությունից ծնված ակրունի ենպիրիկ արտահայտությունն է: Ջեյմս Ջոյսի կարծիքով գրականության մեջ թույլ ենք տալիս պայմանականություններ, ըստ այդմ էլ նա գրականությունը համարում է արվեստի ցածր ձև: Ընդունելի է. եթե այդ պայմանականությունները պատահական ու մտացածին լինեին: Ուրեմն տեսիլը դեռևս պոեզիա ու պրոզա չէ: Կարևորը տեսիլի միջոցով վիճակի ապրումն է և, բնականաբար, վիճակի տպավորության հաղորդումը: Ռոբերտ Եսայանի գրական ստեղծագործական ուղին ոչ միայն ինքնահաղթահարման, այլև վիճակի տպավորությունների հաղթահարման ամբողջական անձիությունն է: Լա ընթերցողին հայտնի է հիմնականում «Հեռակետեր», «Ծարաված հետքեր», «Տարածություն և հոգի», «Նժար», «Քառս և լույս», «Սիրո գիրք», «Հետագիծ», «Հիշատա-

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
*Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,*

